

**ՎԱՆԱՆԴԵՑՈՒ «ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՅՈՒՅՑԸ» ԵՎ ԴՐԱ
ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ**

Նահապետյան Ա. Ա., Ալեքսանյան Ա. Վ.

1695թ. Ամստերդամում տպագրվեց հայերեն I տպագիր քարտեզը, որն անվանվեց «Համատարած Աշխարհացոյց»: Հոդվածում խոսվում է Ղուկաս Վանանդեցու կատարած հսկայական աշխատանքի մասին և մանրամասն ներկայացվում է քարտեզի տեսքն ու պրոյեկցիան: Քարտեզը կազմվել է իր ժամանակի վերջին քարտեզագրական տվյալներով և գաղափարներով: Այն ձևավորված է հոլանդական քարտեզագրական ավանդույթներով՝ օգտագործելով դիցաբանական կերպարներ և ներառում է աստղերի և բևեռների գծապատկերները և Արեգակնային համակարգի պատկերը: Ունի բացատրագիր-ուղեցույց «Բանալի» անվանումով (1696թ.), որտեղ մանրամասն խոսվում է քարտեզի վրա աշխատելու և տեղեկատվությունն օգտագործելու մասին:

Բանալի բառեր. քարտեզ, պրոյեկցիա, արևադարձ, օրթողրոմ, լոքսողրոմ:

Նախաբան: Աշխատանքը նվիրված է Ղուկաս Վանանդեցու «Համատարած Աշխարհացոյց» քարտեզին, որը կազմվել է 1695թ. Ամստերդամի հայկական գաղթօջախում: Այն գրելիս օգտագործվել են անհրաժեշտ համապատասխան գրական աղբյուրներն ու քարտեզագրական նյութերը: Որոշ տվյալներ վերցված են Մատենադարանում եղած ձեռագրերից և բնագրերից:

Աշխատանքը գրելիս մեր առջև նպատակ է դրվել՝

1. տալ քարտեզի և նրա պրոյեկցիայի ընդհանուր բնութագիրը,
2. լուսաբանել Վանանդեցու գիտական և հայրենասիրական գործունեությունը,


3. ուշադրություն հրավիրել մեր կողմից մինչև այժմ անհայտ թողած, բայց ժամանակին համընդհանուր արձագանք գտած քարտեզի գիտական գնահատման վրա:

Հայ քարտեզագրական հրատարակությունն ունի շուրջ 300 տարվա պատմություն: Հայ ժողովրդի անընդմեջ տարագրություններն անցյալում զրկել են նրան հաստատուն օրրանից. բռնի տեղաշարժերը ոչնչացրել են զարգացման հնարավորությունները: Հայաստանից վաղուց արդեն ծայր առած պանդխտությունը 17-րդ դարում ավելի է ուժեղանում: Երկրից հեռանում էին գլխավորապես վաճառականները և արհեստավորները, որոնք հայ գաղութներ էին հիմնում այլ երկրներում: Հայ առևտրականները հնուց ի վեր առևտրական կապեր ունեին եվրոպական շուկաների, աշխարհի ամենահեռավոր վայրերի հետ: Ահռելի տարածություններ էին անցնում ծովերով ու ցամաքներով, որի համար նրանց անհրաժեշտ էր իմանալ աշխարհագրություն և քարտեզ ունենալ՝ ճանապարհներն ու քաղաքները գտնելու համար: Հայ առևտրականները Հոլանդիայում մենաշնորհ ունեին (1700-1765թթ.) պարսկական մետաքսի վաճառքի գործում և հայտնի էին մարգարտի և ադամանդի առևտրով [1]: Բայց Ամստերդամում հիմնված հայ գաղթօջախը սկսեց անկում ապրել 18-րդ դարի վերջերից: Իսկ 19-րդ դարի սկզբին, երբ Նապոլեոնը գրավեց Ամստերդամը, միջազգային առևտուրը անկում ապրեց [1]: Ամստերդամի հայ գաղթօջախի պատմական դերը տպարանի հիմնումն ու տպագրության ստեղծումն էր, որը զարգացման 3 շրջան ապրեց: 1695թ. սկսվում է այստեղի հայկական տպագրության III շրջանը: Այս անգամ գործի գլուխ են կանգնում չորս վանանդեցիներ՝ Թովմա վարդապետ Նուրիջանյանը, նրա քեռորդի Մատթեոսը և եղբոր որդիներ Ղուկասը և Միքայելը, որոնց Լեոն «տպագրական մեծ ընտանիք» [4] անունն է տալիս: Վանանդեցիներն Ամստերդամ էին եկել Հայաստանի Գողթան պատմական գավառի Վանանդ ավանից Շահ Աբասի 17-րդ դարի բռնագաղթից հետո: Նրանք իրենց տպագրական գործը սկսում են «Համատարած Աշխարհացոյցից»:

«Համատարած Աշխարհացոյցը» կիսագնդերի քարտեզն է, որը կազմված է իր ժամանակի բարձրագույն արվեստով: Հայերեն առաջին տպագիր քարտեզի տեխնիկական հիմքը պղնձի վրա փորագրողները հոլանդացի Ադրիանուս և Պետեր Սքոնեբեկ եղբայրներն են, որոնք քարտեզն իրենց արվեստով կատարելության են հասցրել: Իր արտաքին տեսքով այն չէր տարբերվում իր ժամանակի քարտեզներից: Նրա 4 անկյուններում պատկերված են տարվա եղանակները, իսկ ճոխության

համար ավելացված են հունական դիցաբանական հերոսները և մոլորակների անունները:

Այն փակցված է կտավի վրա և ունի 120սմx150սմ չափ: Կիսագնդերի վերևի մասում հյուսիսն է, իսկ շրջանակներից վերև գծագրված է Արեգակնային համակարգությունը՝ Պտղոմեոսի սիստեմով (Բանալիում կա նաև Կոպեռնիկոսի սիստեմով): Երկու կիսագնդերն էլ ունեն աշխարհագրական աստիճանացանց, որը վկայում է այդ ժամանակվա քարտեզագրության առաջադիմության մասին: Սակայն որոշ տեղերում կան նաև կողմնացույցներ (պորտուլան քարտեզներ), որը փաստում է այն, որ Աշխարհացույցը անցումնային ժամանակաշրջանի քարտեզ է: Գլխավոր (00) միջօրեականը նշված է ըստ Ֆերրոյի, իսկ կիսագնդերի բաժանումը կատարված է 100° արևմտյան միջօրեականով: Այն ներառում է աստղերի և բևեռների գծապատկերները (հարվայինը դատարկ է, որովհետև դեռևս հայտնագործված չէր) և Արեգակնային համակարգի պատկերը, որը նրան վեր է ածում աստեղացույցի: Ներքևում՝ պսակի մեջ, քարտեզի Համառոտագրությունների բանալին է, և մի չափածո՝ փորագրողների և թարգմանչի մասին: Աշխարհացույցը և նրա ժամանակակից հոլանդական քարտեզները շատ նման են, որը վկայում է, որ Ղուկաս Վանանդեցին, չունենալով հայկական ուրույն քարտեզագրական դպրոց, ինչպիսիք ու մտածված կերպով օգտագործել է ժամանակի ամենաառաջատար դպրոցի՝ հոլանդականի նվաճումները և ստեղծել հայերեն լեզվով մի բարձրորակ ու կատարյալ քարտեզ:



Նկ.1. Վանանդեցու «Համառոտագրած Աշխարհացույց» քարտեզը [7]:

Քարտեզի վրա պատկերված են Մեծ և Փոքր Հայքերն ու Հայաստանը, որոնց սահմանները ճշգրիտ չեն, որովհետև Կասպից ծովը

դեռ հետագոտված չէր և պատկերված էր ընդունված ձվաձև տեսքով [7]: Քարտեզի մեծագույն ծառայությունը օտար տեղանունների տառադարձություններն էին, որոնք հետագայում օգտագործվել են հայկական քարտեզագրության մեջ: Այն կազմված է ստերեոգրաֆիկ լայնական պրոյեկցիայով, որն օգտագործվում է կիսագնդերի քարտեզագրման համար և օժտված է կոնֆորմ հատկությամբ (հավասարանկյուն) [2]: Այստեղ օրթոդրոմը (հուն. ուղղընթաց) պատկերվում է ուղիղ գծով, որը հնարավորություն է տալիս նավարկության ժամանակ առանց դժվարության գտնել այնպիսի կետեր, որոնք ընկած են տվյալ ընթացքի՝ երկու կետերի օրթոդրոմի վրա: Լոքսոդրոմն (հուն.- կորնթարդ) այստեղ պատկերվում է կոր գծով: I անգամ այն օգտագործել է Վ. Մնելլիուսը 1624թ.: Լոքսոդրոմն այն կորընթաց գիծն է, որն ընկած է սֆերոիդի կամ էլ մեկ այլ պտույտի մարմնի մակերևույթի վրա և հատում է այդ մակերևույթի բոլոր միջօրեականները հաստատուն անկյան (ազիմուտի) տակ:

Այս քարտեզին հիմք ծառայող քարտեզագրական նյութերը վերամշակվել, լրացվել, ուղղվել են առավել թարմ տվյալներով ու տեղեկություններով [5]: Առանձին աշխարհամասերի համար օգտագործվել են նորագույն քարտեզներ, որոնք ճշգրիտ են պատկերել տվյալ աշխարհամասը: Դրանց մի մասը հարմարեցվել են պրոյեկցիային ու որոշ ուղղումների ենթարկվել նոր հետագոտական տվյալների ու գրական աղբյուրների հիման վրա: Հեղինակը Ռուսաստանի և ամբողջ Ասիայի պատկերման համար օգտագործել է Հելիում Սանսոնի քարտեզը, որը 1688թ. հրատարակել էր Դե Ռուսսը, որը, սակայն, փոփոխել է ըստ ռուսական չափումների: Եվրոպայի համար ընտրվել է Մերկատորի ատլասը՝ որոշակի թարմացումով, իսկ Աֆրիկայի համար՝ Օրտելիուսի՝ աշխարհի վերափոխված քարտեզը: Ամերիկա մայրցամաքի համար բնագիր չհայտնաբերվեց, որովհետև արտասահմանյան քարտեզներից մի քանիսը չկան մեր գրադարաններում: Առանձնապես ճիշտ են Արևմտյան Եվրոպայի և Միջերկրական ծովի ափերը: Քարտեզում բացակայում են Ավստրալիայի արևելքը, Նոր Զելանդիայի մեծ մասը, Տոռեսի նեղուցը, Ալյասկան՝ ամբողջովին, Ամերիկայի ու Գրենլանդիայի հյուսիսը՝ Արշիպելագով, որոնք այն ժամանակ դեռևս հայտնի չէին: Այստեղ Հնդկաստանը փոքր ու նեղ, իսկ Հարավային Ամերիկան ու Աֆրիկան շատ լայն ու ձգված են գծագրված: Սա I քարտեզն է, որը Ռուսաստանի հյուսիսային և Չինաստանի հետ արևելյան սահմանագիծը ճիշտ է ներկայացրել, իսկ Նոր Երկիրը՝ որպես

կղզի: Տարբեր աղբյուրներից հեղինակի հավաքած նյութերը 1696թ. վերամշակվել ու հրատարակվել են «Բանալի» խորագիրը կրող 30 էջանոց հատուկ ձեռնարկում՝ որպես քարտեզի բացատրագիր [6]: Այն կազմված է 10 գլուխներից: Այստեղ խոսվում է միջօրեականների և գուգահեռականների, 12 համաստեղությունների, արևադարձերի, կլիմայական 5 գոտիների, աշխարհի 4 կողմերի, այդ ժամանակ հայտնի աշխարհագրական օբյեկտների (մինչև 1492թ.), աշխարհի համակարգությունների (ըստ Պտղոմեոսի, Տիխո Բրազայի, Ն. Կոպեռնիկոսի) մասին: Կան մայրցամաքների և 67 քաղաքների աշխարհագրական կոորդինատները, երկարության չափման միավորներն ու դրանց փոխարկումը՝ հայկական ասպարեզի, իտալական մղոնի և ռուսական վերարի: Քարտեզի վրա մասշտաբը չկա, բայց ստերեոգրաֆիկ պրոյեկցիայի աստիճանացանցը բավարար է, որպեսզի հնարավոր լինի չափումներ կատարել: Տրված է երկրագնդի տրամագծի երկարությունը՝ 6872 իտալական մղոն, կան «հողմնային վարդերի» բոլոր ուղղությունները: Այն բացատրում է քարտեզը կարդալու և հասկանալու օրենքներն ու պայմանները և պարունակում է կարևոր տեղանունների աշխարհագրական տվյալների աղյուսակ: Այստեղ կան այն բոլոր քաղաքների տվյալները, ուր գնում էին հայ առևտրականները (Սպահան, Շամախի, Միլան, Կրակով, Մոսկվա, Ստոկհոլմ, Արխանգելսկ և այլն): Մեկ տարի անց հրատարակվել է նոր փոքրածավալ աշխարհագույց, որի օրինակը չի պահպանվել:

Եզրակացություն: Ամստերդամում տպագրված «Համատարած Աշխարհագույցը» հայերեն I տպագիր քարտեզն է, որը կազմված է բարձր ճաշակով ու գիտական հիմքերով: Այդ քարտեզի համար հեղինակին շնորհվել է Օքսֆորդի համալսարանի մագիստրոսի և Անգլիական թագավորական աշխարհագրական ընկերության անդամի կոչում:

Վանանդեցու հայ քարտեզագրությանը մատուցած մեծագույն ծառայություններից մեկն էլ տեղանունների և քաղաքների տառադարձումներն են: Աշխարհագույցը կարելի է համարել այդ ժամանակի լավագույն և ամենաարդիական քարտեզներից մեկը, որից ոգևորվելով՝ Պետրոս Առաջինը հրավիրել է Սքոնեբեկ եղբայրներին՝ Ռուսաստանում քարտեզագրական դպրոց հիմնադրելու:

Ըստ Պտղոս Զեքիանի՝ Վանանդեցու օրինակը կապիտալի և մշակույթի միջև «երջանիկ ամուսնության» օրինակելի դեպք է, որովհետև նա կարողացել է օգտագործել հայկական կապիտալը ի նպաստ հայ մշակույթի զարգացման [3, 5]:

**“БОЛЬШАЯ КАРТА МИРА” (АМАТАРАЦ АШХАРАЦУЙЦ)
ВАНАНДСКОГО И ЕЕ ИСТОРИЧЕСКАЯ РОЛЬ**

Нагапетян А. А., Алексанян А. В.

В 1695 году в Амстердаме была издана первая печатная армянская карта, получившая название “Аматарац Ашхарацуйц”. В статье рассказывается об огромной работе, проделанной Гукасом Ванандеци, где подробно описывается внешний вид и проекция карты. Карта составлена с использованием новейших картографических данных и идей своего времени. Она основана на голландских традициях с использованием мифологических образов, включая схемы звезд, полюсов и изображения Солнечной системы. Карта имеет пояснительное руководство под названием “Ключ” (“Банали” -1696 г.), в котором подробно рассказывается о работе с картой и об использовании информации, содержащейся на ней.

Ключевые слова: карта, проекция, тропик, ортодром, локсодром.

**“BIG MAP OF THE WORLD” OF GH. VANANDIAN AND ITS HISTORICAL
ROLE**

Nahapetyan A. A., Aleksanyan A. V.

In 1695 the first printed map of Armenia was published in Amsterdam, which was called "Universal World Map", "Big Map of the World". The article describes the huge work done by Ghukas Vanandetsi, gives details on the look and projection of the map. The map was made with the latest cartographic data and ideas of its time. It is based on Dutch cartographic traditions, using mythological images, including star and pole diagrams, and the image of the solar system. It has an explanation-guide called "The Key" (1696), which highlights in detail about the working on the map and using the information.

Keywords: map, projection, return, orthodrome, locodrome.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արրահամյան Ա. Գ. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության: Հատոր 1: Երևան: «Հայաստան» հրատ.: 1964: 486 էջ:
2. Բարսյան Հ. Ա., Մեթանջյան Վ. Ա. Քարտեզագրություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան: ԵՊՀ հրատ.: 2019: 142 էջ:

3. Զեքիյան Պ. Հայկական ուղին դեպի արդիականություն /Հայ ինքնության ավանդույթի և նորույթի ,հատուկի և ընդհանրականի միջև: Վենետիկ: 1996: 88 էջ:
4. Լեո Հայ տպագրություն: Հայկական տպագրություն: Հատոր Ա: Թիֆլիս: 1904: 293 էջ:
5. Միրզոյան Հ. Տպագրիչը, մտածողը, հայրենասեր գործիչը: //Հայրենիքի ձայն: 20/IV: 1983: N17 (925): էջ 5-7:
6. Վանանդեցի Ղ. Բանալի «Համատարած Աշխարհացոյցի» մերօյ նօրածնի: Յամստերդամ: Յամի տեառն, 1696: 30 էջ:
7. <https://roubengalichian.com/2015/08/02/Ամստերդամի-համատարած-Աշխարհացոյցը-4/> (16.09.2021)

Տեղեկություններ հեղինակների մասին

Նահապետյան Ա. Ա.- դասախոս

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ alvard.nahapetyan@gmail.com

Աղեքսանյան Ա. Վ.- լաբորանտ

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ agapi.aleksanyan@gmail.com

Տրվել է խմբագրություն՝ 16.09.2021

Գրախոսվել է՝ 16.11.2021